ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
1101 ք.Էջմիածին, Մաշտոցի 0
Հեռ. +374(231)52727
Ֆաքս. +374(231)45663
Էլ. փոստ: echmun@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ЭЧМИАДЗИНА
1101,г. Эчмиадзин, ул. Маштоца 0
Тел.+374(231)52727
Факс.+374(231)45663
Эл.почта: echmun@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF EJMIATSIN
1101, Ejmiatsin, 0 Mashtots st., tel. +374(231)52727 fax: +374(231)45663, e-mail: echmun@mail.ru

№ 46 27 հունվարի 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Էջմիածին քաղաքի ավագանու 2015թ. հունվարի 20-ի թիվ 1 նիստի թիվ 2-Ն որոշմամբ հաստատված Էջմիածնի քաղաքային համայնքի փոփոխված բյուջեի ավագանու որոշման քաղվածքը, բյուջեի համապատասխան հատվածները և նախահաշիվները:

Առդիր 105 թերթ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Կ. Խաբբերդյան
հեռ. /0231/ 5-36-63 /510/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 23Բ/1066-15
03 02 2015թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՆԻՍՏ ԹԻՎ 1 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ_2-Ն____

«20» հունվարի 2015թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և ՀՀ <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքների պահանջներով և հաշվի առնելով, որ 2014թ. բյուջետային տարին եզրափակելուց հետո 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Էջմիածին քաղաքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 186784.6 հազ. դրամ, որից վարչական մասում՝ 130368.2 հազ. դրամ, ֆոնդային մասում 56416.4 հազ. դրամ: Միաժամանակ բյուջեի վարչական և ֆոնդային մասերում առաջացել է նախորդ տարվա ընթացքում կատարված, սակայն չֆինանսավորված պարտավորություններ /նախորդ տարվա պարտքեր/ 25864.8 հազ. դրամ, որից 22645.8 հազ. դրամ վարչական բյուջեի, 3219.0 հազ. դրամ ֆոնդային բյուջեի ու հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը.
Էջմիածին քաղաքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2015թ. բյուջեի վարչական մասի եկամուտները հաստատել 1141496.3 հազ. դրամ,

որից՝

ա/ հողի հարկ 67507.3 հազ. դրամ

բ/ գույքահարկ 214905.5 հազ. դրամ

գ/ պետական տուրք 25000.0 հազ. դրամ

դ/ տեղական տուրքեր 30128.0 հազ. դրամ

ե/ այլ ոչ հարկային եկամուտներ 146827.6 հազ. դրամ

զ/ դոտացիա պետական բյուջեից 580869.5 հազ. դրամ

է/ պատվիրակված լիազորություն ՔԿԱԳ 7282.0 հազ. դրամ

ը/ սուբվենցիա 4078.9 հազ. դրամ

թ/ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների
բյուջեների կորուստների փոխհատուցում 64897.5 հազ. դրամ

2. 2015թ. բյուջեի վարչական մասում առաջացած նախորդ տարվա պարտքերի մարմանը տարեսկզբի ազատ մնացորդից ուղղել 22645.8 հազ. դրամ: Վարչական մասում ըստ բնագավառների ծախսերը հաստատել հետևյալ չափերով՝

| | |
|---|---|
| ա/ քաղաքապետարանի պահպանման ծախսեր | 158629.0 հազ. դրամ |
| որից նախորդ տարվա պարտքեր | 8549.8 հազ. դրամ |
| բ/ կրթության համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր | 190247.7 հազ. դրամ |
| գ/ մշակույթի սուբսիդավորման ծախսեր | 154899.7 հազ. դրամ |
| դ/ սպորտի համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր | 53348.7 հազ. դրամ |
| ե/ բնակ-կոմունալ վարչության ծախսեր | 195793.4 հազ. դրամ |
| որից նախորդ տարվա պարտքեր | 4109.0 հազ. դրամ |
| զ/ բարեկարգման համակարգի ֆինանսավորման ծախսեր | 249904.4 հազ. դրամ |
| որից նախորդ տարվա պարտքեր | 9749.2 հազ. դրամ |
| է/ ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր | 7519.8 հազ. դրամ |
| որից նախորդ տարվա պարտքեր | 237.8 հազ. դրամ |
| ը/ համաքաղաքային միջոցառումների ծախսեր | 30000.0 հազ. դրամ |
| թ/ կրթական, մշակութային և սպորտային նպաստներ | 5000.0 հազ. դրամ |
| ժ/ սոցիալական ֆոնդ | 20000.0 հազ. դրամ |
| ի/ պահուստային ֆոնդ | 98800.0 հազ. դրամ |

3. Հաստատել վարչական մասի ծախսերի գերազանցում եկամուտներին 22645.8 հազ. դրամ:
Վարչական մասում նախորդ տարվա պարտքերի մարմանն ուղղելուց հետո տարեսկզբի ազատ մնացորդի տարբերությունը 107722.4 հազ. դրամ տեղափոխել ֆոնդային մաս և վարչական բյուջեի ծախսերը հաստատել 1164142.1 հազ. դրամ:

Ֆոնդային մասի ծախսերը հաստատել 179738.8 հազ. դրամ, որից

ա/ շենքերի շինությունների կապիտալ նորոգում 16000.0 հազ. դրամ

բ/ փողոցների նորոգում 73219.0 հազ. դրամ

որից նախորդ տարվա պարտքեր 3219.0 հազ. դրամ

գ/ տրանսպորտային սարքավորումներ 10000.0 հազ. դրամ

դ/ վարչական սարքավորումներ 11000.0 հազ. դրամ

ե/ ոչ նյութական հիմնական միջոցներ 2000.0 հազ. դրամ

զ/ նախագծահետազոտական ծախսեր 3400.0 հազ. դրամ

է/ պահուստային ֆոնդ 64119.8 հազ. դրամ

4. Ֆոնդային մասում ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը հաստատել՝ 15600.0 հազ. դրամ, որից

ա/ հողի իրացումից մուտքեր՝ 14000.0 հազ. դրամ

բ/ այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր՝ 1600.0 հազ. դրամ

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՍԼԱՆՅԱՆ